

ԿԵՂՇԻՔԻ ԱՍԳԵՏՆԵՐԸ

Հայաստանի ներկայ բեթիմի ինքնակոչ եւ մոլեռանդ փաստաբանը՝ «Լրարեր» եւ իր փոքրիկ հոգեդրայրները՝ «Նոր Սի» եւ «Երիտասարդ Հայաստան» ուխտած ըլլալ կը թուին ամէն գնով այս գաղութը սրտակառուած պահել Բարձրատիճան ջերմութենէ մը աստապող լուսնոտաներու նման՝ անոնց աչքին գեւեր կ'երեւին իրենց շուրջը գանուուլ լոյրը իրենցմէ սեւէ չափով տարբերողները:

Այս թերթերը իրենց լուսնոտութեան նոսրաներուն մէջ Դաշնակցութիւնը Ֆաշիստ եւ երեւակաւոր, եւ այլեւս իրենց զգաստութեան պահերուն մէջ իսկ չեն կրնար բաժնուիլ իրենց ախտաւոր տեսիլքներու տուեալներէն, եւ կամ գուցէ զգաստութեան պահեր երբեք ալ չունին հոգիով աղքատ ու տնանկ այս սպորմելիները:

Այլապէս անոնք օրն ի րուն թուղթ պիտի շմբուէին փաստերը պիտի շխեղաթիւրէին, իրողութիւնները գլխի վայր պիտի շարժէին եւ իրենց երեւակայութեան գոռ պիտի շտաշին ապացուցանել ճղնելու՝ թէ Դաշնակցութիւնը հակադատութեան եւ Ֆաշիական է: Անոնք սպահովարայ ծանօթ են Դաշնակցութեան թէ՛ պատմութեան եւ թէ՛ ծրարողին, եւ չեն կրնար անծանօթ ըլլալ որ Դաշնակցութիւնը իր բովանդակ գոյութեան բնթացքին սխերիմ թշնամի է եղած ամէն գոյնի բոնակայութեան եւ բոնակայներու, եւ անհաշտ ու անհաւատար հերոսական պայքար է մղել անոնց դէմ՝ միշտ կանգնած ազատ եւ արդար իրաւակարգերու ջատագով տէրութեանց եւ կազմակերպութիւններու կողքին:

Ժամանակ մը՝ այս մարդիկը սովորութիւն էին բրած՝ մանրադիտակն աչքերնուն՝ ուշի ուշով մեր թերթերու եւ գրականութեան մէջ Ֆաշիզմի հետքեր փնտռելու: Եւ նման հետքեր անոնք միշտ ալ կը գտնէին սրտասական անմեղ բառերու եւ աստիճաններու հագուեցնելով բոնադրօսիկ մեկնութիւններ:

Վերջերս կեղծ թէ իրական «փաստաթուղթ» մ'են ձեռք ձգեր անոնք եւ այլեւս ո՛չ իրենց ցնծութիւնը եւ ո՛չ ալ լըրբութիւնը սահման կը ճանչնան: Ի՞նչ է այդ փաստաթուղթը, սակայն:

Իբր թէ Դրօ, Նժդէ, Ա. Գիւլիսանտանեան, — Արեղեան, Վ. Փափաղեան եւ մէկ երկու ուրիշներ — բոլորն ալ նացի Գերմանիոյ գերիշխանութեան ներքեւ ապրած անհատներ — յանձնառութիւն են կ'ընեն շիթիերական իշխանութեան հետ Հայաստանը Սովետական Միութենէն բաժնելու եւ դայն գնելու Բայիսի հովանաւորութեան ներքեւ:

Նախ, ինչպէս արդէն ակնարկեցինք, վերին աստիճան կասկածելի է այդ «փաստաթուղթ»ին հարազատութիւնը: Երկրորդ՝ մեր յիշեալ ինկերները, որքան ալ իրենց անցեալ հայրենասիրական ծառայութիւններով նշանաւոր եւ յարգելի, Դաշնակցութեան սեւէ հեղինակաւոր մարմնի անդամ եղած չեն այդ տեսները եւ հետեւաբար անոնք ո՛ր մէկ իրաւունք ունէին Դաշնակցութիւնը ներկայացնելու եւ անոր անունով նման քաղաքականութիւն վարելու, ո՛չ ալ յիշեալ «փաստաթուղթ»ին մէջ սեւէ յիշատակութիւն կայ Դաշնակցութեան մասին:

Երրորդ՝ եթէ պահ մը փաստարկութեան սիրոյն բնորոշանք անգամ այդ «փաստաթուղթ»ի գոյութիւնն ու անոր հարազատութիւնը, անոր հեղինակները մօտայում նրկատելով Գերմանական զօրքին մօտքն ի Հայաստան՝ սպահովարար իրենց այդ ձախուէր քայլով նպատակ են ունեցեր քաղաքականութիւն խաղալ նաճի իշխանաւորներու հետ եւ մեղմել անոնց մոլուցքը հայ ժողովուրդին դէմ:

Եւ մի՞ թէ նման քաղաքական խաղի մը աստարկութիւն բնելու ամէնէն քիչ իրաւունք պիտի չունենային մեր կարմիր կառուց հակառակորդներն իրենք: Սովետական Միութիւնն ինքը չէ՞ր որ մօտ երկու տարի, 1939-1941, այդօրինակ խաղ մ'ըլսողցաւ շիթիերի հետ: Իրենք մեր հակառակորդները չէ՞ին որ այդ նոյն շրջանին առաջատար բանալով Մոսկուայէն փշոզ հովերու՝ իրենց կաշիքն դուրս կուգային դատաւարաւոր Դաշնակիցներու գոյամարտը նացի Գերմանիոյ դէմ, դայն հոչակելով Անգլո-Սաքսոն Իմպերիալիզմի եւ կապիտալիզմի արդասիք: Իրենք չէ՞ին աշխարհի աշխատաւորութեան ապստամբութեան կոչ ուղղողները: Իրենք չէ՞ին մինչեւ Ռուշինկիթրն պատգամաւորութիւն զրկողները եւ հակապատերազմական գրգռիչ ցոյցերու մասնակցողները:

Ազակեպատ տուներու մէջ բնակողներն իրաւունք չունին ուրիշներու քար նետելու:

Եւ վերջապէս, եթէ անգամ Դաշնակցութեան մէջ գանուած են — եւ կարող է պատահիլ որ գանուած են — փոքրաթիւ անհատներ, որոնք այս կամ այն նկատումներով նացիներու հետ գործակցած են, այդ կ'ապացուցանէ որ Դաշնակցութիւնն ինք նացի կամ Ֆաշիստ է եղած: Եթէ հետեւելու ըլլանք այդ կարգի արտասոց տրամարանութեան մը, Դաշնակցութիւնը վաղուց համայնաւար եւ բոլշևիկ եղած պիտի ըլլար, որովհետեւ փաստն այն է որ շատ աւելի մեծ թուով Դաշնակցական անհատներ կամ ուղղակի համայնաւար են դարձած եւ կամ մնալով հանդերձ մեր շարքերուն մէջ՝ ջերմ համակրութիւն են տածած Սովետական իշխանութեան հանդէպ:

Դաշնակցութեան Ֆաշիականութիւնը ապացուցանող փաստերու իրենց տեղոտ փնտռութիւն մէջ՝ մեր հակառակորդները ցնծութեամբ երկարօրէն կանդ են տած նաեւ մեր ուրիշ մէկ նշանաւոր բնկերոջ, մեծատաղանդ գրագէտ Լեւոն Մեսրոպի, Փարիզի «Ժողովուրդ» թերթին, համայնաւարամիտ օրգանի մը մէջ հրատարակած մէկ յօդուածին վրայ, որ իր էութեանը մէջ զօրաւոր պաշտպանողական մէջ Դաշնակցութեան Ֆաշիականութեան վարկածին դէմ:

Ընկեր Մեսրոպ իր բնդարձակ յօդուածին մէջ անորոշ ակնարկութիւն մ'ըրած է մէկ երկու անուանական Դաշնակցականներու գործակցութեան նացի իշխանութեան հետ, միաժամանակ շեշտելով թէ նացիներուն նմանօրինակ ուղեկիցներ գանուած են բոլոր կազմակերպութեանց մէջ: Այդ քանք բաւական են համարած մեր կարճամիտ հակառակորդներն իրենց թերթին մէջ արտաստալելու համար բնկերոջ ամբողջ յօդուածը՝ կեղծ վերնադրելով եւ բոնադրօսիկ մեկնարանութիւններով:

Ըսուած է թէ Աստուած երբ մէկու մը հոգին ասնել ուղի, նախ անոր խելքը կ'առնէ:

Ահա այսպիսի «կրանիթեայ» փաստերու վրայ հիմնուած՝ մեր գաղութի համայնաւարական հայատառ օրգանը, սանկ չալքմով մը, որ զինքը ծիծաղաշարժ հապիտի մը գերին մէջ գնելէ գատ ուրիշ նպատակի չի ծառայեր, կը պատգամէ թէ մինչեւ որ Դաշնակցութիւնը ծնկաչօք մեղայի չգայ, իրենք պիտի շարունակեն մերժել սեւէ գործակցութիւն անոր հետ:

Չէ, ճանրմ: